

տուրն, այլ եւ ուրիշ առարկաներու հետ նոյն կը համարուին: Այս նոյնացումը յառաջ կու գայ՝ ինդերական առարկային ու արեւուն եւ այլն մէջ տեսնուած նմանութենէ մը, որ շատ անգամ բնամարդու պարզ աչքերով նշմարուած է: Այսպէս՝ արեւը ո՛չ միայն էակ մը կը նկատուի, այլ նաեւ — ինչպէս տեսանք — սատուածութեան մը աչքը. դարձեալ՝ վահան, զնդակ, անիւ եւն<sup>68</sup>: Այս վերջին հայեացքը նաեւ Եղիշիկի ծանօթ է. «Ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան... արեգակն մի է եւ բազում, զի մի անիւ է եւ բազում ճառագայթք» (234): Վահան հանելուկ մը<sup>69</sup> հետեւեալը կ'ըսէ արեւու մասին. «Եօթը (ճիւղեր) կը քաշեն միանիւ կառք մը. երեք միջնանիւններ ունի այդ անանց եւ անդադրուն անիւը, որով կը կայանան ամբողջ էակները»: Հանելուկին միանիւ կառքն արեւն է. զայն կը քաշեն ճառագայթները, որոնք եօթը կը համարուին: Երեք միջնանիւնները կը համապատասխանեն ատուան, միջօրէին եւ իրիկունս:

Գ. Ս. Նեղոսի խրատներու թարգմանութեան մէջ՝ Եղիշիկ ունի սա հատուածը<sup>70</sup>. «Քաղցր է մեղր, բայց արտաւրեց մարմնոյ փրաս աննէ. օգտակար է խրատ եւ յանդիմանութիւն, բայց որ զդէմս յարեւմուտս է հաստատեալ՝ նմա անօգուտ է» (359): Արեւմուտքը արեւու մահուան վայրն է, ուր կը դանուի սանդարմետի դուռը: Լոյսն արեւելքէն կը ծագի, խաւարի խորհրդանիշն արեւմուտքն է. ուստի մահ եւ խաւար արեւմուտքի հետ կապուած են, իսկ կեանք ու լոյս՝ արեւելքի հետ: Մահուան ու խաւարի չար ոգին կամ սատուածութիւնը — սատանան, արեւմուտք կը բնակի. իսկ կեանքի եւ լոյսի բարի ոգին՝ արեւելք: Արդ երբ մէկը խրատ մը լսելէն յետոյ «զգէմս յարեւմուտս» կը հաստատէ՝ սիրան ու հոգին սատանային կ'ուղղէ ու անոր արամազրութեան կ'ենթարկէ, բնականաբար «նմա անօգուտ

է» խրատը: Շատ ընտիր օրինակ մըն է՝ Ն. Շնորհաւույ դրած պայմանն՝ Արեւորդիներու դարձին համար<sup>71</sup>. «Եւ յորժամ զայս (զայլ ի ճշմարիտ սատուածութիւն քրիստոնէութեան) յանձն առնուն (Արեւորդիքն) եւ ասեն եթէ կամաւ եւ յօժարութեամբ սրտից ի բաց կամք ի սատանայական խաւարէութեանց հարցն մերոց... յայնժամ դարձեալ երիցս անգամ հարցէք ցնոսա, որպէս ընդ երեխայն ի ժամ մկրտութեանն, եթէ հրատարէ՞ք ի սատանայէ եւ յամենայն խորհրդոց եւ ի բանից եւ ի դործոց նորա: Եւ իրբեւ յանձն առնուն եւ ասեն թէ հրատարեմք, ապա յարեւմուտս դարձուցէ՛ք զդէմս երեսաց նոցա եւ ասացէ՛ք, թէ թքէ՛ք յերեսն սատանայի երիցս անգամ, եւ անարդեցէ՛ք զնա որպէս զպիղծ եւ զսուտ եւ զանիրաւ»: Վերի խօսքը կ'ակնարկէ մկրտութեան ժամանակ տեղի ունեցած ծիսակատարութեան, զոր Մաշտոցը<sup>72</sup> հետեւեալ կերպով կը բանաձեւէ. «Ապա հրամայէ քահանայն երեւոյսին կամ կնքահօրն դատնալ զէս յարեւմուտս, եւ հարցանէ զերեսայն յանուանէ՛ անելով. (Այս անուն) հրատարի՞ս ի սատանայէ: — Հրատարիմ: ... Եւ ապա քահանայն հրամայէ երեսային կամ կնքահօրն դատնալ զէս յարեւելս, եւ հարցանէ զերեսայն յանուանէ՛ անելով... Հաւատա՞ս ի Աստուած» են: Միւրիւր Ապարանեցի<sup>73</sup> մեր Արեւորդիներուն մասին կը գրէ. «Ընդ որ (կողմն) երթայ արեգակն, ընդ այնմ երկրպաղեն եւ սրտունն զժառն բարտի եւ զշուշան ծագիկ եւ զբամբակին եւ զայլն, որ զգէմս իւրեանց շրջեցուցանեն ընդդէմ արեգակն»: Շիրակացի<sup>74</sup> մայրերը կը խրատեն իրենց որդիները. «Երեսդ զէս արօթրան արած, կամ արեգակի զէմ մի՛ ցեթի (միղեր), որ չպատժուես»: Հոմերոսի զուշակներն արեւելքէն յաճող թռչունին երեւալը բարեզուշակ կը համարէին, իսկ արեւմուտք թեւածողը՝ չարազուշակ:

(Շարունակելի:) Հ. ԱՌԱՆԱՍ ԳԱՐԱՄԱՆԵՆԵԱՆ



<sup>71</sup> Նամականի, Վենետիկ 1838, էջ 242:  
<sup>72</sup> Մաշտոց Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցւոյ Վիեննա 1905, էջ 7:  
<sup>73</sup> Ալիշան, Հին Հատար կամ Հեթանոսական կրօնը Հայոց, Վենետիկ 1895, էջ 92-93:  
<sup>74</sup> Իմին, ազգագր. ժող., Ա, էջ 151:

<sup>68</sup> P. Ehrenreich, Allgemeine Mythologie und ihre ethnologischen Grundlagen, Leipzig 1910, էջ 162: Ամանիա Շիրակացի, անդ, էջ 53: Մամանայ, էջ 126: Հանդ. Ամս. 1929, էջ 436:  
<sup>69</sup> Haug, Vedische Rätselfragen und Rätselfprüche, Sitzungsber. d. k. Bayer. Akad. d. Wiss. zu München. Phil.-hist. Klasse, Bd. II (1875), Heft IV, էջ 463.  
<sup>70</sup> Մեզի համար կարեւորութիւն չունի թէ արեւը իրապէս Եղիշիկ է խրատներուն թարգմանք եւ թէ անոնք Ս. Նեղոսի կը վերաբերին: Վարք Հարանցի մէջ ալ կայ մի եւ նոյն հասուածք, Վենետիկ 1855, Բ. հատոր, էջ 720:

ԵՂԵՔՍԱՆՊԻ ՄԱՆԹԱՆԵՆԵՅ  
 ՄԵՃ ՎԵՃԵՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԺԸ

Յիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի առթիւ:  
 (Շարունակելի)

Ե. Իմ ծանօթութիւնը մեր մեծ վաճառականի հետ՝ տեղի է ունեցած հետեւեալ պարագաներում, 1894ին: Մանթաշեանց՝ որ «Կովկասեան Հայոց բարեգործական ընկերութեան»<sup>1</sup> մի խոշոր զուժար նուիրելով

<sup>1</sup> Ռուսահայոց այս ամենամեծ բարեգործական հաստատութիւնը հիմնուել է 1871ին նախ միայն թիֆլիս քաղաքի մէջ զործելու համար: Նա այնքան ժողովրդականութիւն էր գտել, որ ուստական կառավարութեան թողութեամբ 1882ին նրա զործունէութիւնը տարածուեց բոլորովին Կովկասի վրայ: Ըստ այնմ էլ «Թիֆլիսի Հայոց բարեգործ. ընկերութիւնը» սկսեց կոչուել «Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւն» (Армянское Благотворительное общество на Кавказе) եւ գործեց շատ աւելի մեծ եւ բազմակողմանի ծրագրով: Բոլոր կովկասահայերը անանց կուսակցական եւ դաւանական խտրութիւններէ, խմբուած էին այդ ընկերութեան շուրջը: Մասնաբաժան ոյժերն իրենց անձնական մասնակցութեամբ, իսկ առեւտրականները եւ զբամաշէրներ իրենց խոշոր նուիրատուութիւններով մեծապէս օտարած են նրա բարգաւաճման: Երբ 1911ին թիֆլիսում օժնեկիներ նրա 30ամեայ յարեւանք, ընկերութիւնը հետեւեալ արդասաւոր պատկերն էր ներկայացնում.

ա. Նա ունէր 46 ճիւղ Կովկասի զանազան հայրենակ վայրերում:  
 բ. Պահուէք էր իր սեպհական շինութեան մէջ Որբանոց, չքաւոր հայ որբուհիներ պատասխանելու յատկացում: Այդ շէնքը կտակով նուիրել էր թիֆլիսցի մի հայ առեւտրական, Խոնդադեան, որի անունով էլ Որբանոցը կոչուած էր:  
 գ. Յարակից՝ նոյնպէս սեպհական շինութեան մէջ զեւեղուած էր իր զբամաշէրներ, մեծ դահլիճը եւ իր ճոխ հայկական առարկան էր: Մասնաբաժանին թեան զուրկութեան արեւանք էր: Մասնաբաժանին կից կար նաեւ ընդարձակ դահլիճ — ընթերցարան:  
 դ. Պահուէք էր «ճրի մաշարան», մասնաբաժանայն օտարերկրացի զարոցական աշակերտների համար, որոնք սովորում էին թիֆլիսի ազգային, քաղաքային կամ պետական դպրոցներում եւ կարօտութեան մէջ էին գտնուում:  
 ե. Ունէր «Հրատարակչական հիմնադրամ» հայերէն արժէքաւոր աշխատութիւններ հրատարակելու համար: Այս հիմնադրամը նուիրել էր մի այլ բարեգործ առեւտրական, Աւետիս Պողոսեան անունով:  
 զ. Հիմնել էր «Գրական Հիմնադրամ յամուց Արդիւն» — Նազարեանցի, որտեղից նպաստներ էին արւում կարօտ հայ գրական աշխատողներին:  
 է. Օգնում էր հայրենիք վերադառնալ ուղղափառ հայ զաղթականներին: (Մանթաշեանցի շուրջնաւոր շատ անգամ ձրի փոխադրում էին այդ զաղթականներին Սև Մոզի զանազան նաւահանգիստները եւ մինչև Եգիպտոս):  
 ը. Նպաստում էր հայ գիւղական կարօտ զարոցների: Չանազան բարեխրատ անհատներ որդեկրել էին մէկ կամ աւելի սոսկի զարոցներ եւ հոգում էին նրանց ամբողջ ծախքը, Բարեգործական ընկեր-

«բարեբար»ի տիտղոսն էր ընդունել եւ ընտրութիւնների ժամանակ թիֆլիսի Կենդրոնական Սորհրդի փոխ-նախագահի պաշտօնին էր կոչուել, 1894ին Բաթում դալու ժամանակ կամեցել էր մօտից ծանօթանալ բարեգործականի տեղական ճիւղի գործունէութեան: Այդ միջոցին Բաթումի ճիւղի վարչութեան մէջ էս նախագահ էի, իսկ Խարազեանց՝ Մանթաշեանցի մօրեղբորորդին եւ Ընդհ. Կառավարիչը՝ փոխ-նախագահ: Խարազեանց ինձ յայտնեց Մանթաշեանցի փափազն եւ էս մանրամասն զեկուցում տուի, որից նա այնչափ դո՛հ էր մնացել, որ ինձ խնդրեց, որ հետեւեալ օրը իր գրասենեակին երթամ նրա հետ անձնակախապէս աւելի մօտից ծանօթանալու համար: Նա չէր ծածկել իր զարմանքն, որ դեռ երիտասարդ լինելով հանդերձ, վարչութեան նախագահ էի ընտրուած<sup>2</sup>, երբ վարչութեան միւս բոլոր ան-

րութեան միջոցով, որ միեւնոյն ժամանակ հսկում էր այդ զարոցների ուսումնական եւ անտեսական մասերի վրայ: Առանձնապէս պէտք է յիշատակեմ երկու գլխաւոր բարեբարներին. Տիգրան ԱՓրիկեան, ընկի Երեւանցի որ թիֆլիսում գործող մի բարեխրատ հասրուտ վաճառական էր, եւ Գասպար Տէր Մարգարեան, Չանդեղբուրջի նոյնպէս բարեխրատ մի մարդ, որ Բաթում էր գնացել իրբեւ նախահօր փորոց պարզ բանւոր եւ այնտեղ յաճող էր ու հարստացել:

բ. Չանազան դաւանական քաղաքներում եւ գիւղերում բացել էր ու պահպանում էր ընթերցարաններ ու դիպարաններ:

ժ. Ժողովրդական աղէտների ժամանակ, ինչպէս՝ տարափոխիկ հիւանդութիւններ, սով, հրդեհ եւ այլն, կազմակերպում էր լայն օժանդակութիւն աղէտակալներին: Եւ վերջապէս՝

ժա. Անընդհատ օգնում էր հայ կարօտակներին, թէ հիւանդ եւ թէ չքաւոր վիճակի մէջ գտնուողներին, կամ միանուազ նպատակով եւ կամ պարբերական ձեւով, հանդամանքներին նայելով:

Այսպիսի լայն եւ բազմաբղիւն գործունէութիւն է ունեցած այս մեծ հաստատութիւնն, որ զբարխտաբար պատերազմից յետոյ Ռուսաստանում տեղի ունեցող անակնկալ խոշոր քաղաքական փոփոխութիւնների հետեւանքով զրկուեց իր բոլոր միջոցներից եւ հարկադրուեց զաղբեցնել իր գոյութիւնը...

Նրա հիմնադիրն է եղած՝ թիֆլիսցի մի բժիշկ, Բագրատ Նաւասարդեան: Բայց նրա զարգացման գլխաւոր հեղինակն է եղած նրա կենդրոնական խորհրդի երկարամեայ նախագահը, փաստաբան Սամսոն Յարութիւնեան, որ մի եռանդուն հասարակական գործիչ էր: Ես եւս երկար տարիներ նոյն ընկերութեան Բաթումի ճիւղի նախագահութեան պաշտօնը վարելուց յետոյ, երբ թիֆլիս տեղափոխուեցայ, ինձ վարեցին Կենդրոնական Սորհրդի Անդամ-Գանձապահ: Այս պաշտօնն եւս երկար տարիներ կատարեցի եւ հրատարակեցայ միայն երբ հանդամանքների բերմամբ բնակութիւնս փոխադրեցի Բաթում:

<sup>2</sup> Այս դիրքը ես սպարտական էի մեծ հրապարակալի Գրիգոր Արծրունուն, որ երբ լսել էր թէ Բաթումում Հ. Բար. ընկերութեան ճիւղ է բացուում «Մշակի» մէջ ջերմ կերպով յանձնարարել էր իմ ընտրութիւնը՝ իրբեւ «վերին աստիճանի յաջող», ինչպէս նա գրել էր: «Մշակի» թղթակիցն եւ ապա մշտական աշխատակիցն էի 1882էց սկսած, երբ դեռ զրեթէ պատանեկական հասակում իմ առաջին գրա-

դամներին իրենց թէ անձնական հարստութեամբն եւ թէ հասարակական դիրքովն ինձանից շատ բարձր էին: Ես ի հարկէ գնացի եւ գրասենեակում պատահեց մի դէպք, որ մեծ դեր պիտի խաղար իմ ամբողջ ապագայի համար: Մանթաշեանց նոր էր գնել Կ. Պոլսում մի մեծ շոգենաւ, որ այդ օրն եկել էր Բաթում. նրա նաւապետը յոյն էր եւ ճիշդ այդ ժամին եկել էր իր նաւատիրոջ, Մանթաշեանցին ներկայանալու: Դժբախտաբար՝ նաւապետը բացի յունարէնից ուրիշ լեզու չգիտէր եւ գրասենեակում էլ յունարէն հասկացող չկար եւ Մանթաշեանց նեղացած էր, որ չէ կարողանում նաւապետի հետ խօսել: Մարդ էին ուղարկել մի ծանօթ յոյն յանձնակատարի ետեւից, որ գայ թարգմանէ, բայց չէին գտել: Ես այդ տեսնելով անմիջապէս իմ ծառայութիւնս առաջարկեցի եւ յունարէն լեզուի թարգմանի պաշտօն կատարեցի, որի համար Մանթաշեանց իր մեծ շնորհակալութիւնը յայտնեց: Բայց նրա դժուարութիւնը դրանով չէր վերջանում: Յոյն նաւապետը իր հետն էր բերել Կ. Պոլսից շոգենաւի վերաբերեալ քրքիւկան պաշտօնագրեր, որոնք պէտք է ուսերէն թարգմանութեամբ Բաթումի մարքաստան ներկայացուէին եւ չէին կարողացել ոչ մէկին գտնել, այդ երկու լեզուներին էլ գրակաճօրէն հմուտ՝ որպէս զի այդ աշխատութիւնը կատարէ: Խարազեանց, որ ինձ հետ մտերիմ էր, հարցրեց.

«Ձե՞ս իմանում այդպէս մէկին»:

կան աշխատութիւնս ուղարկել էի նրան տպելու, սուրբ անոնց մեծ յոյսի: Եւ ահա ի մեծ զարմանս իմ, Արծրունին ոչ միայն անմիջապէս եւ անսխալ տպել էր, այլ մի համակրական նամակ էր գրել ինձ, քաջալերելով, որ շարունակեմ գրել: Նրա այս ջերմ յորդորն է եղած պատճառ, որ ես, իմ առեւտրական պաշտօնավարութիւնիցս ազատ ժամանակը նուիրել էմ գրականութեան: Երբ Գրեգոր Արծրունին, 1884ից իր հօրենական կալուածքից եւ այս կերպով իր ապրուստի աղբիւրիցը զրկուելով, ստեղծեց «Մշակը» գաղթեցնել եւ Չուիցլեւա մեկնել, Թիֆլիսում մի խումբ երիտասարդներ վերստին Բաթումի գեղարվեստական սակ փորձեցին իրենց ոյժերով «Մշակը» հրատարակութիւնը շարունակել բայց չկարողացան: Արծրունին հետեւել տարին եւս դարձաւ Թիֆլիս եւ 1886 Յունուարից վերստին սկսաւ ինք հրատարակել: Այս ժամանակ ինձ էլ մի սիրովոր նամակ էր գրել, խնդրելով որ ըստ առաջնայն շարունակեմ իմ աշխատակցութիւնը: Եւ ես անյողող շարունակեցի հաւատարմաբար իմ մասնակցութիւնը «Մշակին», թէ Արծրունու կենդանութեան ժամանակ եւ թէ նրա մահուանից յետոյ, իր յաջորդների, Ալեքսանդր Քալանթարի եւ որս մահաց յետոյ Համր-Առաքելանի խմբագրութեան տարիներում, անընդհատ, մինչեւ որ մի ոճրագործ ձեռք, իր թէ յասան կուսակցական շահերի, վերջ տուեց Առաքելանի կեանքին...

— Իմանում եմ, պատասխանեցի:  
 — Հա՞, բացականչեց Մանթաշեանց, ո՞վ է, ո՞ւր է, ի՞նչ որ պահանջ կը վճարեմ:  
 — Վճարելու հարկ չկայ, պատասխանեցի, այդ ես եմ:  
 — «Դու՞ք» հարցրեց նա զարմացած:  
 Ես առի այդ թրքական պաշտօնագրերից մէկն, որ ամէնից կարեւորն եւ անհրաժեշտն էր, նստայ Խարազեանցի մօտ եւ ուսերէնի թարգմանեցի: Մանթաշեանց հիացած էր. նա ուղեց զիտնալ թէ ես եւրոպական լեզուներ էլ գիտե՞մ եւ մանաւանդ Փրանսերէն կարո՞ղ եմ լաւ գրել, ինչ որ ամէնից պէտքաւորն էր նրա համար: Խարազեանց չթողեց, որ ես պատասխանեմ եւ նա տուեց հարկ եղած բացատրութիւնը, որ եւս աւելի գոհացրեց Մանթաշեանցին:

Հետեւեալ օրը Խարազեանց եկաւ քովս եւ յայտնեց թէ Մանթաշեանց շատ է ցանկանում, որ նրա մօտ պաշտօն ընդունեմ: Ես ոչ մի ժամանակ պատասխանատու դիրքով պաշտօնեայ էի Բաթումի մի մեծ եւրոպական տան (Բիլինէր) մէջ: Ես համաձայնութիւնս յայտնեցի, բայց սպասեցի մի քանի օր, մինչեւ որ յարմար հայ երիտասարդ գտայ ինձ այնտեղ փոխանակող եւ ապա անցայ Մանթաշեանցի գրասենեակը: Մանթաշեանց արդէն մեկնած լինելով Թիֆլիս, Խարազեանց նրան գրեց իմ մուտքս եւ ինձ յայտնեց թէ Մանթաշեանց շատ ուրախ էր, որ այդպէս շուտով կատարել էի նրա կամքն, որովհետեւ նա սիրում էր, որ իր որոշումներն անյապաղ ի գործ դրուին:

Իմ գալուց մի քանի օր վերջը գրասենեակի գանձապահը արձակուրդով մեկնեցաւ եւ Խարազեանց գրամարկըր յանձնեց ինձ: Մի շաբաթ վերջն էլ, ընթացիկ գործերի հետ ինձ ծանօթացնելուց յետոյ ինքը զնաց մէկ ամսուան համար եւ գրասենեակի ամբողջ ղեկավարութիւնը թողեց իմ վրայ:

Մի ամիս յետոյ թէ Մանթաշեանց, թէ Խարազեանց եւ թէ գանձապահը գարձան ետ եւ ես ազատուեցայ իմ վարած կրկնակի պաշտօնից: Մանթաշեանց ինձ նստեցրեց այն վարչական սենեակում, ուր միայն ինքն ու Խարազեանցն էին նստում, որ նշանակում էր թէ ես այնուհետեւ վարչութեան մասն էի կազմում եւ ինձանից զազտնի ոչինչ պիտի ունենային: Մանթաշեանց որոշեց, որ

իմ գլխաւոր դրազմունքս պիտի լինէր նրա արտասահմանեան ճիւղերի վրայ հսկելը, արտասահմանեան առուտուրն եւ առհասարակ արտասահմանեան թղթակցութիւնը:

Շատ շանցած մի յարմար առիթ ներկայացաւ փորձով ապացուցանելու թէ ո՞րքան արժանի էի Մանթաշեանցի ինձ ցոյց տուած այս մեծ վստահութեան: Սամսոնից (Սեւ Ծովի վրայ թրքական նաւահանգիստ), ուր Մանթաշեանց իր գործակատարն ունէր, Ծառուկեան անունով մի տաճկահայ վաճառական, — հեռագիր ստացուեց թէ թուրք կառավարութիւնը արդիւլ է Մանթաշեանցի քարեղը ծախելու մի անհիմն պատրուակով: «Այս խնդիրը կարգադրելը քու գործդ է» ասաց Մանթաշեանց եւ ես երկու օր վերջը մեկնեցայ Տրապիզոն, այնտեղից Սամսոն:

Սասունի դէպքը նոր էր պատահել. եւրոպական ղեկավարները պաշտօնական ըննութիւն էին պահանջել եւ թուրք կառավարութիւնը մեծ կասկածանքով էր վերաբերում ուսահայերիս հանդէպ: Բաթումի օսմանեան հիւպատոսն իմ անցադիրս վրդաանելով հանդերձ հեռագրել էր, ինչպէս յետոյ ինձ ասին, Սամսոնի միւլթասարճին (նահանգապետին), որ իմ վրայ հսկեն: Սամսոն հասնելուս երկրորդ օրը, Ծառուկեանից լսեցի գործի մանրամասնութիւններն եւ տեղական ուսական հիւպատոսի հետ միասին հարկ եղած պաշտօնատունները այցելելով պահանջեցինք, որ անյապաղ վերցնեն արդեւթը, այլապէս խնդիրը դիւանադիտական հանգամանք պիտի ստանար Ռուսաստանի եւ Թիւրքիայի մէջ: Թուրքերը վախեցան ուսական միջամտութիւնից եւ որովհետեւ արդեւթը դրուած էր պարզ կասկածի հիման վրայ, ուստի շուտով ամէն ինչ կարգադրուեց եւ Ծառուկեան իրաւունք ստացաւ Մանթաշեանցի քարեղը ըստ առաջնայն վաճառելու: Ոստիկանութիւնն ամէն տեղ, այնուամենայնիւ հետեւում էր ինձ եւ հիւպատոսի խորհուրդով եւ անմիջապէս հեռացայ եւ դարձայ Բաթում: Այլ եւս Սամսոնից որ եւ է զանդատ չեկաւ:

Մանթաշեանց շարունակում էր անընդհատ ապրանք ուղարկել բոլոր թրքական նաւահանգիստները, մանաւանդ Կ. Պոլիս, Սալոնիք եւ Չիւրուխ: Նա որոշել էր, ամէն գնով, տիրապետող հանդիսանալ այդ շուկաներում, այս մասին կտրուկ հրահանգներ

տարով իր ներկայացուցիչներին: Մի առաւօտ գնում եմ գրասենեակ. Մանթաշեանց ինձանից յառաջ էր եկել, բացել էր ստացուած նամակներն եւ հեռագիրները եւ սաստիկ զրգուած էր Կ. Պոլսից ստացուած մի հեռագրի պատճառով: Ելեանց Կ. Պոլսի ներկայացուցիչը, հեռագրում էր մօտաւորապէս հետեւեալը. «Ապրանքը դժուարութեամբ է ծախուում. դէպօնեում (dépôt) տեղ չկայ. հիմայ էլ «Յուսիկը» (Մանթաշեանցի սեպհական առաքատանաւը) եկաւ. ի՞նչ անեմ»: Մանթաշեանց պատուիրեց. «Հեռագրերը իսկոյն, որ քող ծովը քափէ»: Ես զարմացած նայեցի նրան. «Ես իմ մուկըրէկին (ոգորմելի մարդ) ճանաչում եմ, դու գրել ինչպէս ասում եմ»: Ես այնուամենայնիւ մի քիչ բարեփոխուած ձեւ տուի եւ այնպէս հեռագրեցի: «Որդի»<sup>3</sup> ասաց նա ինձ, դու պատրաստուիր, որ Կ. Պոլիս գնաս, երկար ժամանակով»: Գրասենեակում իսկոյն փոխանորդագիր պատրաստեցին, որով Մանթաշեանց ինձ իր լիազօր փոխանորդն էր նշանակում ամբողջ Թիւրքիայի համար եւ ես մի շաբաթ վերջը մեկնեցայ Կ. Պոլիս: Նա ինձ միայն ընդհանուր հրահանգներ տուեց, մանրամասնութիւնները թողնելով իմ հայեցողութեան, պարագաների համեմատ վարուելու համար: Այդ նրա սովորութիւնն էր. նա աշխատում էր իր գլխաւոր պաշտօնեաների մէջ անձնական դատողութիւն եւ ձեռնընկնելու իրաւունք տալ: Նա այսպէս փորձում էր նրանց. երբ տեսնում էր թէ իր վստահութիւնը արդարացում են, շարունակում էր նոյն ոգևով վարուել, եւ նրանց կացութիւնը բարձրացնել: Իսկ եթէ որ եւ է պաշտօնեայ անընդունակ էր հանդիսանում համապատասխան ինքնուրոյն գործունէութեան համար, նա նրան հանում էր այդ պաշտօնից եւ ուրիշ տեղ նշանակում: Նա նոյն իսկ քաջալերում էր իր գործակատարներին, որ իրենց կարծիքներն ու դատողութիւնները համարձակօրէն յայտնեն իրեն իր սեպհական կարգադրութիւնների մասին: Եթէ ինք հա-

<sup>3</sup> Մանթաշեանց շատ էր սիրում իր մերձաւորներին, որոնց մէջ նաեւ իր գործակատարներին, «որդի» կամ աւելի փաղաքական ձեւով «որդիջան» անել: Նամակ գրելու ժամանակ էլ նա իր առեւտրական ներկայացուցիչներին ուրիշ կերպ չէր դիմում եթէ ոչ «եղբայր» բառով, «եղբայր Յովհաննէս», «եղբայր Աւետիս» եւ այլն: Առհասարակ նա շատ ընտանեալ վարում եւ խօսում էր իր գործակատարների հետ եւ աշխատում էր նրանց համակրանքը գրաւել:

մոզուում էր թէ գործակատարն իրաւունք ունի, նա առանց նեղանալու, փոխում էր իր պատուէրն եւ նրա ասածը կատարում: Կ. Պոլիս անձանօթ քաղաք չէր ինձ համար. նա իմ երկրորդ հայրենիքս է եղած, ուստի դժուարութիւն չունեցայ իմ վրայ գրուած պատասխանատու պաշտօնը կատարելու: Այդ տեղի մասնաճիւղի թէ կառավարիչն (Շիւեանց) եւ թէ նրա օգնականը (Աւետիս Լալայեանց) կովկասահայեր էին. իսկ բոլոր միւս պաշտօնեաներն տաճկահայեր: Կառավարիչը՝ բարեբախտաբար բառացի չէր հասկացել նրան տրուած պատասխանը եւ առաջատանաւի բերած նոր քարիւղի նաւարեռը «ծով չէր թափել», այլ գտել էր եւ դարձել ուրիշ յարմար դէպօրում: Ես տուի նրան Մանթաշեանցի նամակն, որով նա պատուիրում էր, Կ. Պոլսում գտնուած ամբողջ ապրանքը, դրամն եւ բոլոր հաշիւները յանձնել ինձ. իսկ ինքը կոչուած էր հանդէստեան, իր յառաջացած տարիքի եւ վատաբողջութեան պատճառով, որ բոլորովին ձիւղ էր: Շիւեանց անմիջապէս կատարեց այդ պատուէրն եւ ես սկսայ վարել գործն ըստ իմ հայեցողութեան, որ կատարելագոյն տարբեր էր Շիւեանցի բռնած ուղղութիւնից: Ես գործեցի Մանթաշեանցի ողու համաձայն. ապրանքի սպառումն անհամեմատ կերպով աւելցաւ եւ երկու ամիս յետոյ հարկ եղաւ մի ամբողջ շոգենաւով նոր նաւարեռ բերել տալ: Մանթաշեանցից լիովին հաւանութիւն ստացայ. բայց միեւնոյն ժամանակ նա հրահանգ էր տալիս, որ Կ. Պոլսի վարչութիւնը ժամանակաւորապէս յանձնեմ Լալայեանցին եւ ես երթամ Զմիւռնիա եւ Սալոնիք: Այդպէս էլ արի եւ 2 ամիս Կ. Պոլսում մնալուց յետոյ մեկնեցայ նախ Զմիւռնիա:

Մանթաշեանց երբեք չէր մոռանում իր նախկին բարեկամներին, մանաւանդ Մանչեստրի ընկերներին: Նա մեծ համակրանք ունէր մանաւանդ Եսայեան եղբայրների վրայ (Գրիգոր, Եսայի, Գէորգ եւ Ղուկաս): Նրանցից Եսային իր մտերիմ ընկերն էր Պարիզում եւ սրա մահը շատ խոր վիշտ էր պատճառել նրան: «Որքան ժամանակ որ Եսայեան տունը կայ Զմիւռնիայում, դրել էր նա ինձ, նա պէտք է լինի իմ ապրանքի միակ ծախողը, իմ միակ ներկայացուցիչը»: Այս մտքով էլ ես վարուեցայ երբ եկայ Զմիւռնիա եւ տեսակցեցայ Պ. Ղուկաս Եսայեանի հետ, որի

ղեկավարութեան տակ էր գտնուում նրանց առեւտրական ձեռնարկութիւնը Զմիւռնիայում: Սա ամենայն պատրաստակամութեամբ ընդ առաջ դնաց Մանթաշեանցի բաղձանքին եւ որովհետեւ նա ոչ միայն հմուտ եւ գործունեայ վաճառական էր, այլ նաեւ ընդարձակ կապեր ունէր Փոքր Ասիոյ ներքին քաղաքների հետ, ինչպէս նաեւ մեծ գրամագլուխ, ուստի քարիւղի առուտուրը յառաջ տարաւ շատ նպաստաւոր պայմաններով, եւ մինչեւ վերջն էլ մնաց Մանթաշեանցի միակ ներկայացուցիչը Զմիւռնիայի շրջանում:

Ես ստիպուեցայ աւելի շուտ գնալ Սալոնիք, քան մտադիր էի, որովհետեւ այնտեղ էլ պատահել էր ձիւղ այնպիսի մի դէպք, ինչպէս Սամսոնում: Սալոնիքի թրքական քաղաքային վարչութիւնը բացառիկ քաղաքային տուրք էր սահմանել Մանթաշեանցի քարիւղի վրայ եւ որովհետեւ կառավարիչը՝ Փարէմուզեանց մերժել էր վճարել, ուստի թուրք կառավարութիւնը իր կնիքն էր դրել մեր դէպօրի վրայ եւ այս կերպով ապրանքի վաճառումն արգելել: Փարէմուզեանց դիմել էր ուստական հիւպատոսին եւ սա ուղղակի վալիին ներկայանալով պահանջել էր որ անյապաղ արգելքը բարձուի, այլապէս դիւանադիտական բարդութիւնների պատճառ պիտի դառնար: Վալին հրամայել էր, որ ժամանակաւորապէս թոյլ տրուի վաճառումը, մինչեւ որ խնդիրը քննուի Կ. Պոլսում եւ վճուուի: Բայց մի քանի օր մեր դէպօն փակ էր մնացել եւ մեր յաճախորդներից ոմանք մեր «ոչխար» մարկայի փոխարէն սկսել էին մեր մրցակիցների ապրանքը գնել, որը կարող էին նրանք ապագայում էլ շարունակել, որով որոշ վնաս էր հասցրած Մանթաշեանցին: Կացութիւնն այսպէս էր, երբ ես Սալոնիք հասայ: Տեղական միւս գործերը կարգադրելուց յետոյ, այս հարցի վերաբերեալ բոլոր վաւերագրները հետո առնելով մեկնեցայ Կ. Պոլիս: Ես վճուել էի այս անգամ անհետեւանք չթողնել թրքական իշխանութեան այս անիրաւ վերաբերմունքը եւ մամբաման գեկուցադիր պատրաստելով գնացի Բէօյլիքէրէ, ուր գտնուում էր այն ժամանակ, իր սովորական ամանային բնակարանում, ուստական դեսպանը: Այդ միջոցին (1896) ոչ միայն դեսպան Նէլիբով այլ եւ նրա Ա. թարգմանը Մաքսիմով շատ մեծ հե-

ղինակութիւն ունէին Կ. Պոլսում, թէ Բ. Իրան մէջ եւ թէ նոյն իսկ սուլթան Համիդի պալատում: Դեսպանն անմիջապէս ինձ ընդունեց եւ իմ բերանացի բացատրութիւններս լսելուց յետոյ ինձ պատասխանեց թէ իմ բողոքս կատարելագոյն իրաւացի է եւ թէ ինք կը յանձնարարէ Մաքսիմովին ինչ որ հարկն է: Երկու օր վերջը ես գնացի Պէրայի մեր դեսպանատունը Մաքսիմովին տեսնելու. բայց Մաքսիմովի փոխարէն ինձ ընդունեց Բ. թարգմանը, որ յայտնեց թէ Մաքսիմով անակնկալ կերպով Պետերբուրգ էր կանչուել եւ թէ դեսպանը իրեն էր յանձնել իմ բողոքագիրը: Թարգմանը իր թղթապանակը ցոյց տալով ասաց. «Այստեղ երկու խնդրի վերաբերեալ թղթեր կան միայն. մէկը 1877—1878ի թրքական պատերազմական տուգանքի դեռ չվճարուած մասի վերաբերեալ, իսկ միւսը ձեր պահանջը Սալոնիքի դէպքի համար» եւ հարցրեց թէ ի՞նչ գումար էի պահանջում թրքական գանձարանից իրբեւ վնասի հատուցում: Ես որոշեցի 1500 թրք. լիրա: Թարգմանն ընդունեց, բայց աւելացրեց թէ թուրք կառավարութիւնն անշուշտ պիտի ուղէ սակարկել, ուստի ինք ստիպուած պիտի լինի զիջել մի մասն այդ գումարից: Ես խնդիրք թողի նրա բարեհայեցողութեան: «Կարող էք վստահ լինել, ասաց նա, որ դեսպանատունը պիտի չլքանէ ձեր գործը. դեսպանը խիստ հրաման է տուած այդ մասին, եւ ես ուժգնապէս պիտի պաշտպանեմ ձեր իրաւունքը»: Այդչափին ինձ բաւական էր:

Կ. Պոլսում ես հրահանգ ստացայ Մանթաշեանցից, Կ. Պոլսի գործակատարութիւնը յանձնել իր բարեկամ եւ Մանչեստրի ընկեր Գրիգոր Կիւմիւշկէրտանին եւ դառնալ Թիֆլիս: Կիւմիւշկէրտան, Կ. Պոլսում յարգուած վաճառական էր, անգլիահայտաակ, «սուլթանի Փէրմանով» հաստատուած ինչպէս նա սիրում էր կրկնել: Նա ուրախութեամբ ընդունեց Մանթաշեանցի առաջարկութիւնը: Ապրանքի վաճառման պայմանների, իր անձնական վարձատրութեան եւ գրասենեակի ծախքի վերաբերեալ խնդիրները նրա հետ կարգադրելուց յետոյ ես գործակատարութիւնը յանձնեցի Գր. Կիւմիւշկէրտանին. իսկ Աւետիս Լալայեանցին ուղարկեցի Զմիւռնիա իրբեւ աջակից Եսայեանին, քանի որ Լալայեանց աւելի տեղեակ էր քարիւղի ա-

ռեւորին: Մի քանի օր վերջը ես էլ մեկնեցայ Կովկաս: Մի ամիս յետոյ նամակ ստացայ ուստական դեսպանատնից թէ մեր պահանջը կարգադրուած է հետեւեալ կերպով: Թրքական կառավարութիւնը յանձն է առել հատուցում տալ Սալոնիքի մեր դէպօն անիրաւ տեղ փակելուն համար. բայց փոխանակ 1500ի, 800 թրք. լիրա պիտի վճարէր: Եւ որովհետեւ Օսմանեան Գանձարանը երբեք հնչուն դրամի առատութիւն չէ ունեցած, ուստի այդ 800 լիրան էլ պիտի վճարուէր ամսէ ամիս, Կ. Պոլսի մաքսատան վրայ տրուած 8 հէվալէներով (փոխանակագիր): Ես իսկոյն պատասխանեցի մեր համաձայնութիւնը եւ խնդրեցի, որ այդ հէվալէները յանձնեն մեր ներկայացուցիչ Գր. Կիւմիւշկէրտանին: Այդպէս էլ եղաւ: Կիւմիւշկէրտան կանոնաւորապէս դանձեց այդ 800 լիրան, 8 ամսուան ընթացքում: Մանթաշեանց, աւելորդ է ասել, շատ դժ մնաց, բայց ինձ համար անսպասելի կերպով, նա ստացուած արգելքը ուրիշ կերպ տնօրինեց: Նա որոշեց, որ թրքական գանձարանից կորուած այդ գումարը յատկացուի Կ. Պոլսի հայոց բարեգործական հաստատութիւններին: Նա անձնական նամակ գրեց այս մասին Կիւմիւշկէրտանին որ սկսում էր, ըստ սովորականի «եղբայր Գրիգոր»ով: Ըստ այսմ Կիւմիւշկէրտան վճարեց 100 լիրա Սաղիւղի Գալֆայեան Որբանոցին եւ մնացածով էլ ձրի քարիւղ հայթայթեց «Ազգի Տան», այսինքն Ս. Փրկչի Հիւանդանոցին: Այս նուիրատուութիւնները կատարուեցան Գրիգոր Կիւմիւշկէրտանի անուսից, որովհետեւ Մանթաշեանց չէր սիրում, որ իր բարեգործութիւնները հրապարակ հանուին... Կ. Պոլսի լրագրներն էլ այդ բոլորը բնականարար վերադրեցին Պ. Կիւմիւշկէրտանի, իրբեւ նրա անձնական նուէրը...:

Թիֆլիսում ես երկար չմնացի: Նոյն տարուց (1896) վերջերը մեկնեցայ Ռուսանիա: Բաթումի անտուկի գործարանի համար պէտք եղած տախտակը ստացուած էր մեծ մասամբ Ռուսանիայից, Բաթումի մի հրեայ յանձնակատարի միջոցով: Մանթաշեանց յանձնարարել էր, որ ես աշխատիմ ուղղակի յարաբերութեան մէջ մտնել ուստական տախտակի գործարանատէրերի հետ, աւելի ձեռնտու գներ եւ վճարման պայմաններ ձեռք բերելու համար: Ես մեկ-

նեցայ Ռուսմանեա, ուր (Գալացում) արդէն մեր սեպհական ճիւղն ունէինք՝ Դանուբի ափերում եւ Բուլղարիայում մեր ապրանքը ծախելու համար. գործակատարը մի ուսմանահայ էր: Բայց այս ուղեւորութիւնս անյաջող անցաւ: Ռուսմանական գործարանատէրերը կապուած էին իրենց միջնորդներին հետ մի քանի տարւով եւ այնպէս էին պայմանաւորուած, որ եթէ նրանք՝ սուսնց իրենց միջնորդութեան էլ ապրանք ծախէին Բաթումի համար, դարձեալ ստիպուած էին որոշ յանձնառու չէք վճարել այդ միջնորդներին: Այսչափ միայն կարողացայ յարմարցնել, որ վճարումը փոխանակ կանխիկ կատարելու, 6 ամսուան պայմանաժամ էր տրուում շատ թեթեւ տոկոսով, որ դարձեալ ապրանքի գին վրայ մի փոքրիկ գեղջ էր նշանակում: Մանթաշեանց շատ գոհ չմնաց այս վերջին պայմանից, որովհետեւ նա չէր սիրում մուրհակ ստորագրել, այլ կողմնակից էր միշտ կանխիկ վճարումի՝ հաշուի վրայ որոշ գիշում ստանալով: Բայց որովհետեւ մուրհակը նա պիտի չստորագրէր, այլ իմարազեանց՝ թէեւ միշտ նրա փոխանորդութեամբ, ուստի լռեց եւ հաստատեց իմ արած պայմանագրութիւնը:

Եգիպտոսում ուսական քարիւղը հետզհետէ ընդարձակ չըջան էր գրաւում, տարածուելով դէպի վերին Եգիպտոս եւ աւելի հարաւ, դէպի Սուտան: Այստեղ մեր մրցակիցները, որոնք գլխաւորաբար ամերիկական եւ ապա նաեւ ուսմանական կէրօսին էին սպառում, սկսել էին զանազան տեղեր մեծ շտեմարաններ կառուցանել, յատկապէս հնդուկ վիճակի մէջ սպառելու համար, այսինքն՝ սուսնց տակառի եւ սնտուկի, ուղղակի յաճախորդի ամանի մէջ լցնելով: Մանթաշեանց չուզեց ետ մնալ. Թիֆլիս կանչեց իր ներկայացուցիչ Մութաֆեանցին եւ նրա հետ երկարօրէն խորհրդակցելուց յետոյ, որոշեց մեծապէս ընդարձակել Եգիպտոսի գործը, երկու մեծ ձեռնարկութիւններով: Նախ՝ Ալեքսանդրիայում կառուցանել մեծ երկաթեայ բէզէրվուարներ, այնտեղ քարիւղի մեծ պահեստ ունենալու համար, իսկ միւս երկրորդական տեղերում աւելի փոքր, նայելով սպառման աստիճանին: Երկրորդ՝ այս պահեստատեղիներին իր ժամանակին անարգել ապրանք հասցընելու համար յատուկ նաւթարար շոգենաւ (bateau-

citerne) պատուիրել: Այս շոգենաւն այնպէս պիտի շինուած լինէր, որ ի պահանջել հարկին թէ հեղուկ եւ թէ սնտուկ բառնար, եւ կամ ամբողջապէս հեղուկ:

Հետեւեալ տարին ամէն ինչ պատրաստ էր. թէ Եգիպտոսի բէզէրվուարներն եւ թէ նոր նաւթարար շոգենաւը: Մանթաշեանցի յանձնարարութեամբ եւս դնացի Թիֆլիսից Բաթում նոր շոգենաւն ընդունելու, որ եկել էր անդլիական գրօշակով: Այդտեղ նրա դրօշակը վերածեցինք ուսականի եւ միլտեցինք «Բօրթօմ» անունով, որ Թիֆլիսի մօտ սքանչելի հանքային ջրի ամառանոց էր: Այս առթիւ անդլիականից ուսականի վերածուց նաեւ միւս նաւը՝ «Գրէնվիլ», որ միլտուց «Լիկանի» անունով: Այս Լիկանին էլ Բօրթօմին կից ամառանոց տեղ էր: Այս բոլոր նաւերի վրայ գրուած էր Մանթաշեանցի առեւտրական գինանշանը, հայկական «Գառն Աստուծոյն»: Այս «գառն» էր, որ աւելի մեծ գիրքով, այն է «ոչխարի» ձեւով դարձաւ Մանթաշեանց քարիւղի սնտուկի «մարկան»:

Մանթաշեանց շատ էր կամենում, որ իր նաւերի պաշտօնեաներն էլ՝ նաւապետները սկսած մինչեւ նաւաստիները, նոյպէս հայ լինին, որքան այդ կարելի էր իրագործել: Բայց այս կողմից շատ քիչ յաջողութիւն ունեցաւ: Հայերը, ինչպէս յայտնի է, ծովեզերեայ ժողովուրդ չլինելով նաւազնացութեան վարժ չեն: Այնու ամենայնիւ ունեցանք երկու հայ իրրեւ նաւապետի օճնական, մէկը կովկասահայ, միւսը տաճկահայ, նոյնպէս եւ մի պոլսեցի մեքենավար: Մի երկու հայ էլ վարձուեցան իրրեւ պարզ նաւաստի:

«Ա. Մանթաշեանց Առեւտրական Տունն» երկար տեւողութիւն չունեցաւ. 1899ին նա հիմնաւորապէս կերպարանափոխուեց եւ գործն էլ աւելի ընդարձակուեց: Ըստ այնմ իմ պաշտօնս եւ կացութիւնս էլ նոր ձեւաւորում ընդունեց:

(Շարտանակելի:) ՄԱՐՈՒՆՆ



**ԹՆՈՒՄՈՒՆ ԺԵՄԵՆԵԿԵՍԻՑ ԳՐԵԿՆԻ ԿԵՆՆՔԻՆ**

\* Բարգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան — Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ: — Ապրիլ 26ին օծուեցաւ Բարգէն սրբազան՝ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ իրրեւ աթոռակից վեհաշնորհ Տ. Սահակ Կաթողիկոսին:

Ամէն տեղ, ուր երեւցած է Նորին Օծութիւնը, մշակած է արդիւնաբեր գործունէութիւն. 1909ին իրրեւ առաջնորդ Գաղատիոյ թեմին (ձեռնադրուած Եպիսկոպոս 1910ին), 1913—1914 իրրեւ Առաջնորդական տեղապահ Մեթրիկայի, 1925—1930 իրրեւ դասախօս Երուսաղէմի Ս. Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանին եւ այլն: Ինչպէս գործնական ասպարէզի վրայ եղած է ժիր եւ կազմակերպող, նոյնպէս գրական-բանասիրական մարդին մէջ բարդաւաճած է եռանդուն գործունէութիւն. եւ իրրեւ այդպիսի եղած է միշտ բարեկամ խմբագրութեանս եւ երկարժամանակեայ աշխատակից Ուսումնաթերթին: Յիշենք իր կարեւոր աշխատութիւններէն՝ Կոլոս Յովհաննէս Պատրիարք (1904), Ծով (1904), Եղիշէ (1908), Խալամը հայ մատենագրութեան մէջ (1930), որոնք լոյս տեսած են նախ «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ:

Այժմ իրրեւ նեցուկ արկարգ նորին վեհաշնորհ Տեառն Սահակ Կաթողիկոսի եւ իրրեւ կառավարիչը Սոյ Աթոռայն վստահ ենք թէ աւելի թափով պիտի կազմակերպէ հայ ողին դաղթական ժողովրդեան մէջ, պիտի ջամբէ անոր առատ միխթարութիւն, մոռնալու անցեալի հարուածները եւ անվեհեր դիմելու դէպի յառաջ, դէպի լուսադոյն ապագայ: Մեր ջերմ մաղթանքները կը բաղձանք որ ըլլան անբաժին ընկերներ Նորին Օծութեան յառաջադէմ քայլերուն:

\* Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան — Պատրիարք Երուսաղէմի: — Սերաստիոյ նախկին եւ Գահիրէի այժմեան առաջնորդն արհիապատիւ Թորգոմ Եպիսկոպոս Յունիս 16ին ընտրուած է պատրիարք Երուսաղէմի Ս. Յակոբեանց աթոռին, իրրեւ յաջորդ հանդուցեալ Եղիշէ Դուրեանի:

Կողմունքնք բաղձարդիւն Նորին արհիապատուութիւնս իւր գործունէութեան նոր ասպարէզի վրայ: Ինչպէս մինչեւ այժմ հոյակապ հանդիսացած էր Սրբազանն արդային, քաղաքական եւ գրական ասպարէզներու

վրայ, կը մաղթենք, որ նոյնը երաշխիք ըլլայ արդարացնելու այն յոյսերը, զորոնք կ'ակնկալէ Ազգը իր նոր ասպարէզին վրայ:

«Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը կ'ողջունէ յանձին նորընտիր պատրիարքին իւր բարեկամս եւ աշխատակիցը:

\* Հ. Արսէն Վ. Ղազիկեան — անդամ վեկետիկի Գիտութեան, Գրականութեան եւ Արուեստի Կառախին: — Իտալական դասական հեղինակներու՝ Գանտէի, Տասոյի... մեծախաստակ թարգմանիչն Հ. Ա. Ղազիկեան, արժանացած է վեկետիկի Գիտութեան, Գրականութեան եւ Արուեստի Կառախին բարձր գնահատութեան եւ անուանուած է անդամ նոյն Կառախին: Մեր եղբայրական ուրախակցութիւնը բաղձալաստակ Հօր:

\* Կոմիտաս Վարդապետի 60 ամեակը: — Յունիս 24ին տօնուեցաւ Կոմիտաս Վարդապետի ծննդեան 60 ամեայ տարեդարձը: Թէպէտ տօնաւորն չեղաւ հանդիսատես տօնախմբութեանց, չինդաց խնդացողներու հետ, բայց հանդիսարահները թնդացին անոր անունով. շքադիրն էր հայ ժողովուրդը, շրջապատուած ծափահարող օտար հիւրերով:

Յանուն արուեստաւորին արուեստը կը գնահատուէր: Կոմիտաս Վարդապետ հայ ժողովրդական Երգին երգիչն էր եղած: Ինքն էր լսելի ըրած հայ ժողովրդեան կուրծքին տակ թագնուած աղու ձայնը հրապարակին, արուեստովը, շնորհքովը, նրբութեամբը, որ հնչեց քաղցրալուր, զուարթ, ողինքը պարբող. ինքն էր հանած երեւան հայ երգին արուեստը, որ նկատուեցաւ ինքնուրոյն, խօսուն, յանկուցիչ: Իրմով ցցուած էր կարկառուն հայ երգին ազգային նկարագիրը, պարզ, անպաճոյճ, բայց արտայայտող զգածումներ, խօսող սրտերուն, սեպհական ելեւէջներով: Հայ Երգը գտած էր տեղ միջագային երաժշտութեան մէջ. ձայնի սեպհական թրթուումներով, ոչ խանդարելու բաղձանուազ հնչումները օձտումներով կամ խառնաձայն խզուրբախններով, այլ ուրախ, հեշտական, նաեւ արտամխառն խաղերով աւելի քաղցրալուր գործելու երգի եւ երաժշտութեան ունկնդրութիւնը:

Հայ քաղաքակրթութեան անձանօթ, բայց կարեւոր մէկ գիծն էր, որ կը յայտնա-